



**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ**

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԱՄՆՅՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ 29(449) «12» նոյեմբերի 2021թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԻՆ		
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԸ		
588	«Առևտրի և ծառայությունների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ ՀՕ-107-Ն օրենքը.....	4
589	«Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԱՀ ՀՕ-108-Ն օրենքը.....	5
590	«Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԱՀ ՀՕ-109-Ն օրենքը.....	18
591	«Վարչական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ԱՀ ՀՕ-110-Ն օրենքը.....	27
592	«Քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ԱՀ ՀՕ-111-Ն օրենքը.....	30
ՉՈՐՈՐԴ ԲԱԺԻՆ		
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱՄԱՆԱԳՐԵՐԸ		
593	«2022 թվականի ձմեռային զորակոչ անցկացնելու և զորացրում կատարելու մասին» ԱՀ Նախագահի ՆՀ-3431-Ն հրամանագիրը.....	32
594	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահի 2005 թվականի հոկտեմբերի 6-ի ՆՀ-238 հրամանագրում փոփոխություն կատարելու մասին» ԱՀ Նախագահի ՆՀ-3477-Ն հրամանագիրը.....	33
ՀԻՆԳԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ		
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԿԱՐԳԱՂՈՒԹՅՈՒՆԸ		
595	«Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի հոկտեմբերի 13-ի ՆԿ-9-Ն կարգադրության մեջ լրացումներ կատարելու մասին» ԱՀ Նախագահի ՆԿ-14-Ն կարգադրությունը	34
ՅՈՒԹԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ		
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ		
596	«Արցախի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեում վերաբաշխում և Արցախի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 26-ի N 145-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ	

	կառավարության N 1171-Ն որոշումը	35
597	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունիսի 8-ի N 353-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 1172-Ն որոշումը.	37
598	«Արցախի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեում վերաբաշխում և Արցախի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 26-ի N 145-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 1178-Ն որոշումը.	38
599	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 1192-Ն որոշումը	41
600	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 1205-Ն որոշումը	42
601	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 1206-Ն որոշումը	43
602	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 1207-Ն որոշումը	44
603	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 1208-Ն որոշումը	45
604	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 1209-Ն որոշումը	46
605	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 1210-Ն որոշումը	47
606	«Արցախի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 1-ի N 626-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ԱՀ կառավարության N 1213-Ն որոշումը	48
607	«Արցախի Հանրապետության կառավարության 2021 թվականի հոկտեմբերի 12-ի N 1096-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» ԱՀ կառավարության N 1229-Ն որոշումը	49
	ՏԱՄՆԵՐԿՈՒԵՐՈՂ ԲԱԺԻՆ	
	ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ, ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՅԼ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՀՐԱՄԱՆՆԵՐԸ	
608	««ԼԻԼՖԱՐՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության դեղատնային գործունեության իրականացման վայրի փոփոխման մասին» ԱՀ առողջապահության նախարարի N 257-Ա հրամանը.....	50
609	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների նախարարի 2016 թվականի հունվարի 11-ի N 5-Ն հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԱՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի N 252-Ն հրամանը.....	51

610	«Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարի 2018 թվականի ապրիլի 27-ի N 141-Ն հրամանում փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի N 253-Ն հրամանը.....	53
611	«Արցախի Հանրապետությունում մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության լիցենզիա և լիցենզիայի ներդիր տրամադրելու, լիցենզիայի ներդիրի գործողությունը դադարեցնելու մասին» ԱՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի ՆՀ-52-Ա հրամանը.....	54

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2021 թվականի
հոկտեմբերի 28-ին

**«ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Առևտրի և ծառայությունների մասին» 2005 թվականի մայիսի 25-ի ՀՕ-206 օրենքի 19-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերում «2021» թիվը փոխարինել «2026» թվով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2020 թվականի դեկտեմբերի 31-ից ծագած հարաբերությունների վրա:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2021թ. նոյեմբերի 3
Ստեփանակերտ
ՀՕ-107-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2021 թվականի
նոյեմբերի 10-ին

«ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՄԱՆԻՏԱՐԱՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» 1998 թվականի նոյեմբերի 23-ի ՀՕ-36 օրենքում (այսուհետ՝ Օրենք) «Լեռնային Ղարաբաղի» բառերը փոխարինել «Արցախի» բառով, բացառությամբ 28-րդ հոդվածի:

Հոդված 2. Օրենքի 2-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 2. Արցախի Հանրապետության սանիտարական օրենսդրությունը

Արցախի Հանրապետության սանիտարական օրենսդրությունը կազմված է սույն օրենքից, Արցախի Հանրապետության օրենսդրական և ենթաօրենսդրական այլ ակտերից:»:

Հոդված 3. Օրենքի 5-րդ հոդվածի 6-րդ կետում վերջակետը փոխարինել միջակետով և լրացնել հետևյալ բովանդակությամբ 7-րդ կետ.

«- հաստատում է սույն օրենքով սահմանված եզրակացությունների տրամադրման կարգերը:»:

Հոդված 4. Օրենքի 6-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 6. Արցախի Հանրապետության առողջապահության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի լիազորությունները բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման բնագավառում

Արցախի Հանրապետության առողջապահության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմինը (այսուհետ՝ լիազոր մարմին) իր իրավասության շրջանակներում իրականացնում է՝

- բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման բնագավառում պետական քաղաքականության մշակումն ու դրա իրականացման ապահովումը.

- Արցախի Հանրապետության տարածքում պետական հիգիենիկ և հակահամաճարակային հսկողությունը.

- մարդու և հանրության առողջության պահպանման, բնակչության առողջության բարելավման, հիվանդությունների կանխարգելման քաղաքականության մշակումն ու դրա իրականացման ապահովումը.

- սանիտարական կանոնների մշակումն ու հաստատումը.

- բնակչության առողջության վրա շրջակա միջավայրի գործոնների ազդեցության սոցիալ-հիգիենիկ դիտարկումների, ուսումնասիրությունների իրականացումը.

- բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման կազմակերպական մեթոդական ղեկավարումը.

- բժշկական ու հիգիենիկ գիտելիքների և առողջ ապրելակերպի մասին իրազեկումը.

- վարակիչ և ոչ վարակիչ զանգվածային հիվանդությունների և թունավորումների կանխարգելման նպատակով սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային միջոցառումների կազմակերպումը.

- սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային վերահսկողության իրականացման մեթոդական ղեկավարումը:»:

Հոդված 5. Օրենքի 7-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 7. Արցախի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման բնագավառում վերահսկողություն իրականացնող մարմնի (այսուհետ՝ Վերահսկողություն իրականացնող մարմին) լիազորությունները

Վերահսկողություն իրականացնող մարմինը իրականացնում է՝

- Արցախի Հանրապետության տարածքում պետական սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային վերահսկողությունը.

- վարակիչ և ոչ վարակիչ զանգվածային հիվանդությունների և թունավորումների կանխարգելման նպատակով սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային միջոցառումների կազմակերպման նկատմամբ վերահսկողությունը.

- սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային վերահսկողության իրականացման մեթոդական ղեկավարումը.

- բնակչության առողջության վրա շրջակա միջավայրի գործոնների ազդեցության գնումների իրականացումը.

- բժշկական ու հիգիենիկ գիտելիքների և առողջ ապրելակերպի մասին իրազեկումը:»:

Հոդված 6. Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի՝

1) 4-րդ կետից հանել «զանգվածային» բառը, իսկ «վարակիչ հիվանդությունների» բառերից հետո լրացնել «բռնկումների,» բառը.

2) 5-րդ կետն ուժը կորցրած ճանաչել.

3) 6-րդ կետում վերջակետը փոխարինել միջակետով և լրացնել հետևյալ բովանդակությամբ 7-րդ կետ.

«- օրենքով սահմանված դեպքերում իրականացնում են այլ լիազորություններ:»:

Հոդված 7. Օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական հիգիենիկ և հակահամաճարակային ծառայությանը» բառերը փոխարինել «Վերահսկողություն իրականացնող մարմին» բառերով և «տեղական ինքնակառավարման մարմիններին» բառերից առաջ լրացնել «պետական կառավարման և» բառերը:

Հոդված 8. Օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական հիգիենիկ և հակահամաճարակային ծառայության մարմինների և» բառերը փոխարինել «Վերահսկողություն իրականացնող մարմնի» բառերով:

Հոդված 9. Օրենքի 11-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 11. Ձեռնարկությունների, հիմնարկների, կազմակերպությունների և քաղաքացիների իրավունքների իրացման երաշխիքները

Պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձանց այն գործողությունը կամ անգործությունը, որը հանգեցրել է կամ կարող է հանգեցնել սույն օրենքի 9-րդ և 10-րդ հոդվածներով նախատեսված իրավունքների խախտման, կարող է օրենսդրությամբ սահմանված կարգով բողոքարկվել վարչական կամ դատական կարգով:»:

Հոդված 10. Օրենքի 12-րդ հոդվածում՝

- 1) 1-ին մասից հանել «քաղաքային և գյուղական» բառերը.
- 2) 2-րդ մասի «միայն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական հիգիենիկ և հակահամաճարակային ծառայության համապատասխան մարմնի դրական եզրակացության դեպքում» բառերը փոխարինել «Վերահսկողություն իրականացնող մարմնի կողմից» բառերով.
- 3) լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ մաս.
«Բնակելի շենքերի շինարարության, վերակառուցման և կառուցապատման նախագծային և նորմատիվային փաստաթղթերի վերաբերյալ դրական եզրակացություն տրամադրում է լիազոր մարմինը»:

Հոդված 11. Օրենքի 13-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 12. Օրենքի 14-րդ հոդվածում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական հիգիենիկ և հակահամաճարակային ծառայության համապատասխան մարմնի» բառերը փոխարինել «լիազոր մարմնի» բառերով:

Հոդված 13. Օրենքի 15-րդ հոդվածում՝

- 1) 2-րդ մասի «սանիտարական կանոններին դրանց համապատասխանության մասին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական հիգիենիկ և հակահամաճարակային ծառայության» բառերը փոխարինել «լիազոր մարմնի» բառերով.
- 2) 3-րդ մասի «համապատասխան գլխավոր պետական սանիտարական բժշկի» բառերը փոխարինել «Վերահսկողություն իրականացնող մարմնի» բառերով:

Հոդված 14. Օրենքի 16-րդ հոդվածում՝

- 1) 1-ին մասի «Քաղաքների և այլ բնակավայրերի բնակիչներն ապահովվում են մարդու» բառերը փոխարինել «Համայնքը բնակիչներին ապահովում է» բառերով.
- 2) 6-րդ մասի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական հիգիենիկ և հակահամաճարակային ծառայության» բառերը փոխարինել «Վերահսկողություն իրականացնող մարմնի» բառերով:

Հոդված 15. Օրենքի 19-րդ հոդվածում՝

- 1) 1-ին մասն ուժը կորցրած ճանաչել.
- 2) 3-րդ մասից հանել «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական հիգիենիկ և հակահամաճարակային ծառայության դրական եզրակացության առկայության դեպքում,» բառերը:

Հոդված 16. Օրենքի 20-րդ հոդվածի՝

- 1) 1-ին մասում «փաստաթղթերի» բառից հետո լրացնել «, այդ թվում՝ սանիտարական կանոնների» բառերը.

2) 2-րդ մասի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական հիգիենիկ և հակահամաճարակային ծառայության» բառերը փոխարինել «լիազոր մարմնի» բառերով:

Հոդված 17. Օրենքում լրացնել հետևյալ բովանդակությամբ 20.1-20.12-րդ հոդվածներ.

«Հոդված 20.1. Արցախի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման ընդհանուր պահանջները վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների, թունավորումների կանխարգելման բնագավառում

Վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների, թունավորումների դեպքերը ենթակա են հաշվառման և հաղորդման բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների կողմից: Հաղորդման և հաշվառման ենթակա վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների և թունավորումների ցանկը հաստատվում է լիազոր մարմնի ղեկավարի սահմանած սանիտարական կանոնների համաձայն: Հաղորդման և հաշվառման ենթակա վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների և թունավորումների դեպքերի հաշվառումը և հաղորդումն իրականացվում են լիազոր մարմնի ղեկավարի սահմանած սանիտարական կանոնների համաձայն:

Մարդու (հանրության) առողջության վրա շրջակա միջավայրի գործոնների վնասակար ազդեցության նվազեցման, դրանց կանխարգելման, բացառման, ինչպես նաև վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների առաջացման և տարածման, կանխման ու վերացման նպատակով լիազոր մարմինը, տեսչական մարմինները, տեղական ինքնակառավարման մարմիններն իրենց իրավասությունների շրջանակներում և բժշկական օգնություն ու սպասարկում իրականացնող կազմակերպությունները, սանիտարական կանոններին համապատասխան, սույն օրենքի 6-10-րդ, 24-րդ հոդվածներով և այլ օրենքներով սահմանված կարգով իրականացնում են հետևյալ կանխարգելիչ և հակահամաճարակային միջոցառումները՝

- բժշկական փաստաթղթերի, ներառյալ՝ բժշկական գնություն կամ լաբորատոր հետազոտություն հավաստող կամ կանխարգելիչ այլ միջոցառումներ հավաստող փաստաթղթերի ուսումնասիրություն.

- լիազոր մարմնի որոշմամբ սահմանված վարակիչ հիվանդությունների տեսակետից անբարենպաստ երկրներ կամ վարակիչ օջախ հանդիսացող վայրեր ուղևորությունների պատմության ուսումնասիրություն.

- բժշկական գնություն.

- ախտահանում, միջատազերծում, կրծողազերծում.

- վարակիչ հիվանդությունների՝ լիազոր մարմնի կողմից սահմանված ախտանիշներին կամ առողջական վիճակին համապատասխանող անձանց (այսուհետ՝ հնարավոր վարակակիր), տվյալ վարակիչ հիվանդություններով հիվանդների հետ շփված անձանց, հիվանդության ինկուբացիոն շրջանում վարակակրի հետ շփված անձանց (այսուհետ՝ կոնտակտավոր անձինք), ինչպես նաև վարակիչ հիվանդությունների հարուցիչներ կրողների բժշկական գնություն կամ բժշկական օգնություն և սպասարկում, այդ թվում՝ իմունականխարգելման իրականացում կամ հոսպիտալացում.

- լիազոր մարմնի որոշմամբ սահմանված վարակիչ հիվանդությունների տեսակետից անբարենպաստ երկրներից Արցախի Հանրապետության տարածք մուտք գործող կամ Արցախի Հանրապետության տարածքում գտնվող վարակիչ հիվանդության կասկածով անձանց հայտնաբերելիս բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունը, պետական սահմանի անցակետում պետական վերահսկողություն

իրականացնող մարմինները, դեպքն արձանագրող այլ անձինք կամ մարմինները սանիտարական կանոններին համապատասխան տեղեկացնում են լիազոր մարմինն՝ ապահովելով այդ անձանց ժամանակավոր մեկուսացումը, անհրաժեշտության դեպքում՝ հոսպիտալացումը:

- հնարավոր վարակակիր, ինչպես նաև վարակիչ հիվանդությունների հարուցիչներ կրող անձանց, կոնտակտավոր անձանց նկատմամբ բժշկական հսկողության սահմանում:

- հնարավոր վարակակիր, ինչպես նաև վարակիչ հիվանդությունների հարուցիչներ կրող անձանց, կոնտակտավոր անձանց շփումների ուսումնասիրությանն ուղղված միջոցառումների ձեռնարկում:

- անհատական պաշտպանության միջոցների պարտադիր օգտագործում:

Սույն հոդվածով նախատեսված անհատական պաշտպանության միջոցների ցանկը, դրանց կիրառման կարգն ու պայմանները, ինչպես նաև սանիտարահամաճարակային անվտանգության կանոնները ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտով սահմանում է լիազոր մարմինն՝ ղեկավարը:

Սույն հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով նախատեսված միջոցառումների ենթակա անձը տեղեկացվում է այն ախտանիշների մասին, որոնց առկայության հիմքով կատարվում է համապատասխան միջոցառումը, իսկ հոսպիտալացման դեպքում նաև այն վայրի մասին, որտեղ կատարվելու է հոսպիտալացումը: Անձի պահանջով հոսպիտալացում իրականացնող պարտավոր է այդ մասին անհապաղ տեղեկացնել նրա ընտրած անձին:

Անձի՝ սույն հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով նախատեսված միջոցառումներից (բացառությամբ իմունականխարգելման) հրաժարվելու դեպքում դրանք իրականացվում են Քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով:

Սույն հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով սահմանված դեպքերում ժամանակավոր մեկուսացման նկատմամբ ենթակա են կիրառման սույն օրենքի 20.8-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված երաշխիքները:

Վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների, թունավորումների առաջացման և տարածման, կանխման ու վերացման նպատակով զինված ուժերի, ոստիկանության և այլ զորքերի զորամասերում օրենքով սահմանված սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային միջոցառումները կարող են իրականացնել պաշտպանության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմինը, Արցախի Հանրապետության ոստիկանությունը (այսուհետ՝ Ոստիկանություն) կամ Արցախի Հանրապետության ազգային անվտանգության ծառայությունը (այսուհետ՝ Ազգային անվտանգության ծառայություն):

Հոդված 20.2. Կարանտին սահմանելը

Վարակիչ հիվանդությունների՝ Արցախի Հանրապետության տարածք ներբերման (ներթափանցման), դրանց ծագման ու տարածման վտանգի, բռնկումների, համաճարակների առաջացման, ինչպես նաև դրանց հետևանքով արտակարգ իրավիճակ առաջանալու դեպքերում կարող է սահմանվել կարանտին:

Կարանտինը վարակիչ հիվանդությունների բռնկումները, համաճարակները տեղայնացնող, վերացնող, վարակի օջախները մեկուսացնող և վարակի հետագա տարածումը, վարակիչ հիվանդությունների ներբերումը (ներթափանցումը) կանխող ռեժիմ է, որը սահմանվում է Արցախի Հանրապետության ամբողջ տարածքում կամ Արցախի Հանրապետության առանձին տարածքներում (հասցեներում):

Կարանտին սահմանելու մասին որոշումը լիազոր մարմինն առաջարկությամբ կայացնում են՝

- Արցախի Հանրապետության կառավարությունը՝ Արցախի Հանրապետության ամբողջ տարածքում կամ պետական սահմանի անցակետում կամ համաճարակի (կարանտինային) գոտին երկու կամ ավելի շրջան (ներառյալ՝ մեկ կամ ավելի շրջան և Ստեփանակերտ քաղաքը) ներառելու դեպքում, այդ թվում՝ արտակարգ իրավիճակի հիմք հանդիսացող կարանտինի դեպքում.

- շրջանի վարչակազմի ղեկավարը՝ Արցախի Հանրապետության համապատասխան վարչատարածքային միավորում կամ դրա առանձին տարածքում, այդ թվում տվյալ վարչատարածքային միավորում գտնվող կամ գործունեություն իրականացնող կազմակերպությունների (անկախ սեփականության կամ կազմակերպարավական ձևից) գտնվելու կամ գործունեության իրականացման վայրերում.

- Ստեփանակերտի քաղաքապետը՝ Ստեփանակերտ քաղաքում կամ դրա առանձին տարածքում, այդ թվում Ստեփանակերտ քաղաքում գտնվող կամ գործունեություն իրականացնող կազմակերպությունների (անկախ սեփականության կամ կազմակերպարավական ձևից) գտնվելու կամ գործունեության իրականացման վայրերում:

Կարանտին սահմանելու մասին որոշման մեջ նշվում են՝

- կարանտին սահմանելու հիմքերը.

- կարանտինային գոտու (համաճարակի գոտու)՝ վարակի օջախի սահմանները.

- կարանտին սահմանելու ժամկետը.

- անհատական պաշտպանության միջոցների օգտագործման պահանջը.

- անհրաժեշտ կանխարգելիչ, հակահամաճարակային և սահմանափակող միջոցառումների ցանկը, սահմանափակող միջոցառումների կիրառման կարգը, դրանց կիրառման ժամկետը, կազմակերպումն ու իրականացումն ապահովելու համար պատասխանատու մարմինները, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Լիազոր մարմինը, գնահատելով սույն օրենքի 20.1-ին հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով սահմանված կարգով ստացված տեղեկատվությունը, հիվանդության հարուցիչի ախտաճանաչությունը, տարածման առանձնահատկությունները, տարածքի բնական-աշխարհագրական պայմանները՝ հիվանդության արմատավորման տեսակետից, կարանտին սահմանելու և անհրաժեշտ սահմանափակող միջոցառումներ կիրառելու մասին առաջարկություն է ներկայացնում Արցախի Հանրապետության կառավարություն կամ համապատասխան շրջանի վարչակազմի ղեկավարին կամ Ստեփանակերտի քաղաքապետին:

Կարանտին սահմանելու մասին որոշումը կայացվում է համապատասխան առաջարկությունը լիազոր մարմնի կողմից Արցախի Հանրապետության կառավարություն կամ համապատասխան շրջանի վարչակազմի ղեկավարին կամ Ստեփանակերտի քաղաքապետին ներկայացվելուց հետո՝ 24 ժամվա ընթացքում: Սահմանված ժամկետում որոշում չկայացվելու դեպքում անձանց ժամանակավոր մեկուսացումը վերացվում է:

Հոդված 20.3. Կարանտին սահմանելու դեպքում կիրառվող սահմանափակող միջոցառումները

Կարանտին սահմանելու դեպքում, ի լրումն 20.1-ին հոդվածի 2-րդ մասում նշված միջոցառումների, կարող են կիրառվել հետևյալ սահմանափակող միջոցառումները.

- համաճարակի (կարանտինային) գոտում մուտքի և ելքի հատուկ ռեժիմի սահմանում.

- պետական սահմանով հաղորդակցության ժամանակավոր դադարեցում կամ սահմանափակում.

- անձանց ազատ տեղաշարժվելու իրավունքի և տրանսպորտային միջոցների տեղաշարժման սահմանափակումներ.

- օբսերվացիա.

- ինքնամեկուսացում.

- մեկուսացում:

Սույն հոդվածով սահմանված միջոցառումները կիրառվում են վարակիչ հիվանդությունների տարածումը կանխելու, դրանց հետևանքները վերացնելու, անձանց և հանրության առողջությունը պահպանելու նպատակներով և պետք է համաչափ լինեն այդ նպատակներին: Կարանտին սահմանելու դեպքում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների գործողությունները պետք է համարժեք լինեն կարանտին սահմանելու հիմք հանդիսացած հանգամանքներով պայմանավորված իրավիճակին:

Սույն հոդվածով սահմանված միջոցառումների կիրառումը չի կարող խոչընդոտել Ազգային ժողովի, դատարանների և Մարդու իրավունքների պաշտպանի, զինված ուժերի և այլ զորքերի բնականոն գործունեությունը:

Արտակարգ իրավիճակ առաջացնող համաճարակով պայմանավորված կարանտին սահմանելու դեպքում բնակչության պաշտպանությունը, կիրառվող այլ միջոցառումների ցանկը, այդ միջոցառումների կազմակերպման և իրականացման կարգն ու առանձնահատկությունները սահմանվում են «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» օրենքով:

Հոդված 20.4. Համաճարակի գոտում մուտքի և ելքի հատուկ ռեժիմ սահմանելը

Կարանտին սահմանելու մասին որոշմամբ մուտքի և ելքի հատուկ ռեժիմ սահմանված լինելու դեպքում հատուկ ռեժիմի իրականացումն ապահովելու համար կարող են տեղադրվել հատուկ անցակետեր և բժշկական զննության իրականացման կետեր:

Անցակետերում և բժշկական զննության իրականացման կետերում անվտանգության և ռեժիմի պահպանությունն ապահովում է Ոստիկանությունը:

Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված անվտանգության և ռեժիմի պահպանությանը կարող են ներգրավվել նաև լիազոր մարմնի ներկայացուցիչները, Վերահսկողություն իրականացնող մարմինը, տեղական ինքնակառավարման մարմինները, Ազգային անվտանգության ծառայությունը և արտակարգ իրավիճակների բնագավառում պետական կառավարման լիազոր մարմինը:

Հոդված 20.5. Անձանց ազատ տեղաշարժվելու իրավունքի և տրանսպորտային միջոցների տեղաշարժման սահմանափակումները

Կարանտին սահմանելու մասին որոշմամբ կարող են կիրառվել անձանց ազատ տեղաշարժվելու իրավունքի և տրանսպորտային միջոցների տեղաշարժման հետևյալ սահմանափակումները.

- տեղաշարժվելու իրավունքի սահմանափակում որոշակի տարածքի սահմաններում.

- անհատական պաշտպանության միջոցների առկայություն կամ կիրառություն և սանիտարահամաճարակային անվտանգության կանոնների պահպանում.

- բնակության վայրի բնակելի տարածքից դուրս գտնվելիս և տեղաշարժվելիս անձի մոտ անձը հաստատող փաստաթղթի առկայություն.

- անձնական օգտագործման մարդատար և բեռնատար տրանսպորտային միջոցներում, կանոնավոր և ոչ կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցներում, մարդատար-տաքսի ավտոմոբիլներում, հանրային տրանսպորտում անհատական պաշտպանության միջոցների առկայություն կամ կիրառություն և սանիտարահամաճարակային կանոնների պահպանում, ուղևորների թվաքանակի սահմանափակում, ինչպես նաև սույն կետով սահմանված սահմանափակումների կիրառման նկատմամբ վերահսկողության նպատակով տրանսպորտային միջոցների զննում:

Սույն հոդվածով նախատեսված միջոցառումների կիրառման նկատմամբ հսկողությունն իրականացնում և սահմանափակումների խախտման համար պատասխանատվության միջոցները կիրառում է Ոստիկանությունը:

Հոդված 20.6. Օբսերվացիան

Օբսերվացիան բժշկական զննության, համաճարակաբանական դիտարկման, կանխարգելիչ, սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային միջոցառումների համալիր է, որը կիրառվում է որոշակի ժամանակահատվածով վարակիչ հիվանդություններով հիվանդների հետ անմիջական շփված (կոնտակտավորված)՝ մեկուսացված, ինքնամեկուսացված, համաճարակային գոտի մուտք գործող և դուրս եկող, վարակիչ հիվանդությունների տեսակետից անբարենպաստ երկրներից Արցախի Հանրապետության տարածք մուտք գործող հիվանդության կասկածով անձանց նկատմամբ:

Օբսերվացիայի շրջանակներում անձի՝ բժշկական հետազոտության ենթարկվելուց հրաժարվելու դեպքում այն իրականացվում է Քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված դատական կարգով:

Եթե օբսերվացիայի արդյունքներով անձի մոտ հաստատվում է վարակիչ հիվանդության առկայությունը, ապա նրա նկատմամբ կիրառվում է հոսպիտալացում՝ սույն օրենքով սահմանված դեպքերում և կարգով կամ հրահանգվում է ինքնամեկուսանալ՝ սույն օրենքի 20.7-րդ հոդվածով սահմանված կարգով:

Օբսերվացիայի իրականացման կարգի մանրամասները սահմանվում են լիազոր մարմնի ղեկավարի ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտով:

Հոդված 20.7. Ինքնամեկուսացումը

Ինքնամեկուսացումը հնարավոր վարակակիր, կոնտակտավոր անձանց, ինչպես նաև վարակիչ հիվանդությունների հարուցիչներ կրողների առանձնացումն է իրենց մշտական բնակության կամ իրենց նախընտրությամբ մեկ այլ վայրում՝ որոշակի ժամանակահատվածում այլ անձանց հետ անմիջական շփումը սահմանափակելու և վարակի տարածումը կանխելու նպատակով:

Ինքնամեկուսացման ենթակա յուրաքանչյուր անձ իրեն հասկանալի լեզվով անհապաղ տեղեկացվում է ինքնամեկուսացման պատճառների, բժշկական խորհրդատվության մատչելիության իրավունքի և իր պարտականությունների մասին:

Անձի նկատմամբ ինքնամեկուսացումը կիրառվում է սույն օրենքով նախատեսված կարգով: Ինքնամեկուսացման հրահանգը տրվում է լիազոր մարմնի կամ Վերահսկողություն իրականացնող մարմնի անունից՝

համապատասխան մարմնի ղեկավարի կողմից լիազորված պաշտոնատար անձի բանավոր կարգադրությամբ, իսկ հասցեատիրոջ բանավոր կամ գրավոր պահանջով ենթակա է գրավոր ձևակերպման ոչ ուշ, քան պահանջն ստանալուց հետո՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

Պաշտպանության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի, ոստիկանության և այլ զորքերի զինծառայողներին (աշխատակիցներին) ինքնամեկուսացման հրահանգը կարող է տրվել համապատասխանաբար պաշտպանության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի, Ոստիկանության կամ Ազգային անվտանգության ծառայության անունից՝ նրանց ղեկավարի լիազորած պաշտոնատար անձանց բանավոր կարգադրությամբ, իսկ հասցեատիրոջ բանավոր կամ գրավոր պահանջով ենթակա է գրավոր ձևակերպման ոչ ուշ, քան պահանջն ստանալուց հետո՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

Սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված ինքնամեկուսացման հրահանգը կարող է կարանտին սահմանելու որոշմամբ սահմանված դեպքերում կիրառվել նաև Արցախի Հանրապետություն մուտքի դեպքում:

Ոստիկանությունը հսկողություն է իրականացնում ինքնամեկուսացված անձանց տրված հրահանգի պահանջների կատարման նկատմամբ, բացառությամբ սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքերի: Ոստիկանությունը սույն մասով սահմանված գործառնություններն իրականացնելիս անհրաժեշտության դեպքում կարող է դիմել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին: Սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքերում հսկողությունն իրականացնում են պաշտպանության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմինը, Ոստիկանությունը կամ Ազգային անվտանգության ծառայությունը:

Հոդված 20.8. Մեկուսացումը

Մեկուսացումը հնարավոր վարակակիր, կոնտակտավոր անձանց, ինչպես նաև վարակիչ հիվանդությունների հարուցիչներ կրողների առանձնացումն է լիազոր մարմնի որոշմամբ նախատեսված վայրում՝ որոշակի ժամանակահատվածով այլ անձանց հետ անմիջական շփումը բացառելու և վարակի տարածումը կանխելու նպատակով:

Մեկուսացման ենթակա յուրաքանչյուր անձ իրեն հասկանալի լեզվով անհապաղ տեղեկացվում է մեկուսացման պատճառների, բժշկական խորհրդատվության մատչելիության իրավունքի և իր պարտականությունների մասին: Մեկուսացման ենթարկված անձի պահանջով մեկուսացում կիրառող մարմինը պարտավոր է անձի մեկուսացման մասին անհապաղ տեղեկացնել նրա ընտրած անձին:

Մեկուսացման հրահանգը տրվում է լիազոր մարմնի կամ Վերահսկողություն իրականացնող մարմնի անունից՝ համապատասխան մարմնի ղեկավարի կողմից լիազորված պաշտոնատար անձի գրավոր հրահանգով:

Պաշտպանության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի, ոստիկանության և այլ զորքերի զինծառայողներին (աշխատակիցներին) մեկուսացման հրահանգը կարող է տրվել համապատասխանաբար պաշտպանության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի, Ոստիկանության կամ Ազգային անվտանգության ծառայության անունից՝ նրանց ղեկավարի լիազորած պաշտոնատար անձանց գրավոր հրահանգով:

Ոստիկանությունը հսկողություն է իրականացնում մեկուսացված անձանց տրված հրահանգի պահանջների կատարման նկատմամբ, բացառությամբ սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքերի: Ոստիկանությունը սույն մասով սահմանված գործառնություններն

իրականացնելիս անհրաժեշտության դեպքում կարող է դիմել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին: Սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքերում հսկողությունն իրականացնում են պաշտպանության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմինը, Ոստիկանությունը կամ Ազգային անվտանգության ծառայությունը:

Անձի նկատմամբ մեկուսացումը կիրառվում է այն դեպքում, երբ անձին հրահանգվել է ինքնամեկուսանալ, սակայն անձը հրաժարվել է, կամ երբ անձը խախտել է ինքնամեկուսացման հրահանգով նախատեսված կանոնները, ինչպես նաև՝ սանիտարահամաճարակային անվտանգության նորմերով նախատեսված հիմքերի առկայության դեպքում:

Մեկուսացման դեպքում անձը արտակարգ իրավիճակների բնագավառում պետական կառավարման համակարգի լիազոր մարմնի կամ Ոստիկանության ներկայացուցչի հսկողությամբ և լիազոր մարմնի կամ Վերահսկողություն իրականացնող մարմնի ներկայացուցչի ուղեկցությամբ տեղափոխվում է լիազոր մարմնի կողմից սահմանված մեկուսացման վայր, բացառությամբ սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքերի:

Մեկուսացման վայրում անձի համար ապահովվում են սննդի, կեցության համար բավարար պայմաններ, բժշկական խորհրդատվություն: Անհրաժեշտության դեպքում մեկուսացված անձի համար ապահովվում է բժշկական օգնություն և սպասարկում ստանալու հնարավորությունը:

Պաշտպանության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի, ոստիկանության և այլ գործերի զինծառայողներին (աշխատակիցներին) մեկուսացնելու դեպքում անձը պաշտպանության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի, Ոստիկանության կամ Ազգային անվտանգության ծառայության ներկայացուցիչների հսկողությամբ և ուղեկցությամբ տեղափոխվում է համապատասխանաբար պաշտպանության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի ղեկավարի, Ոստիկանության պետի կամ Ազգային անվտանգության ծառայության տնօրենի սահմանած մեկուսացման վայրեր:

Հոդված 20.9. Սահմանափակող միջոցառումների կիրառումն ապահովելու նպատակով անձանց տվյալների փոխանցումը

Սահմանափակող միջոցառումների կիրառման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու նպատակով սահմանափակման ենթակա անձանց վերաբերյալ տվյալները էլեկտրոնային առողջապահության համակարգի միասնական օպերատորի կողմից փոխանցվում են Վերահսկողություն իրականացնող մարմնին և Ոստիկանությանը:

Հոդված 20.10. Կարանտինի գործողության ժամկետը, դրա երկարաձգումը և կարանտինի դադարումը

Կարանտինը սահմանվում է մինչև վեց ամիս ժամկետով:

Կարանտին սահմանելու հիմքերը չվերանալու դեպքում դրա ժամկետը կարող է երկարաձգվել յուրաքանչյուր անգամ մինչև վեց ամիս՝ պահպանելով կարանտին սահմանելու՝ սույն օրենքով սահմանված կարգը:

Կարանտինը դադարում է կարանտին սահմանելու մասին որոշման ժամկետը լրանալու կամ կարանտին սահմանելու մասին որոշման գործողությունը դադարեցվելու դեպքում:

Հոդված 20.11. Կարանտին սահմանվելու դեպքում բնակչության բժշկական օգնության և սպասարկման կազմակերպումը

Կարանտին սահմանվելու դեպքում բժշկական օգնության և սպասարկման լիցենզիա ունեցող կազմակերպությունները (անկախ սեփականության ձևից) բժշկական օգնությունը և սպասարկումը իրականացնում են՝ հիմք ընդունելով լիազոր մարմնի ղեկավարի հրամանները:

Հոդված 20.12. Սույն գլխով նախատեսված ակտերի և գործողությունների (անգործության) բողոքարկումը

1. Կարանտինի պայմաններում սույն գլխով սահմանված միջոցառումների կիրառման շրջանակներում սույն գլխով նախատեսված մարմինների կայացրած ակտերը ենթակա են անհապաղ կատարման, բացառությամբ կարանտին սահմանելու մասին որոշմամբ կիրառվող միջոցառումների խախտման դեպքում կայացված ակտերի:

2. Կարանտինի պայմաններում սույն գլխով սահմանված միջոցառումների կիրառման շրջանակներում սույն գլխով նախատեսված մարմինների կայացրած ակտերը, գործողությունները (անգործությունը) կարող են բողոքարկվել վարչական կարգով կամ վարչական դատարան՝ օրենքով սահմանված կարգով: Սույն մասով նախատեսված բողոքարկումը չի կասեցնում համապատասխան ակտի կատարումը, բացառությամբ կարանտին սահմանելու մասին որոշմամբ կիրառվող միջոցառումների խախտման դեպքում կայացված ակտերի:»:

Հոդված 18. Օրենքի 22-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 22. Բժշկական պարտադիր զննությունը

Առանձին մասնագիտությունների, ինչպես նաև առանձին հիմնարկների և կազմակերպությունների աշխատողները մարդկանց առողջության պահպանման, վարակիչ և մասնագիտական հիվանդությունների կանխարգելման նպատակով ենթակա են նախնական և պարբերական բժշկական զննության:

Բժշկական զննությունների անցկացման կարգը սահմանում է Արցախի Հանրապետության կառավարությունը, բացառությամբ «Մանդամբերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով սահմանված դեպքի:

Այն անձանց, որոնք չեն ենթարկվել նախնական և պարբերական բժշկական զննության, ինչպես նաև եթե բժշկական զննությամբ անտորոշվել է Արցախի Հանրապետության կառավարության սահմանած հիվանդություններից որևէ մեկը, ապա Վերահսկողություն իրականացնող մարմնի համապատասխան տարածքային ստորաբաժանման ղեկավարի որոշմամբ մինչև սահմանված կարգով բժշկական զննության ենթարկվելը, իսկ հիվանդության դեպքում՝ մինչև առողջացումը, չեն թույլատրում աշխատել Արցախի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:»:

Հոդված 19. Օրենքի 23-րդ հոդվածի՝

1) 1-ին մասում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական հիգիենիկ և հակահամաճարակային ծառայության մասնագիտական փորձաքննության տվյալների հիման վրա տրված դրական եզրակացության առկայության դեպքում» բառերը փոխարինել «սանիտարահիգիենիկ փորձաքննության առկայության դեպքում» բառերով.

2) 3-րդ մասում «փորձաքննություն է իրականացվում նաև» բառերից հետո լրացնել «լիազորված մարմնի կամ» բառերը, իսկ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական հիգիենիկ և հակահամաճարակային ծառայության» բառերը փոխարինել «, Վերահսկողություն իրականացնող մարմնի» բառերով:

Հոդված 20. Օրենքի 24-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 24. Համաճարակաբանական դիտարկումը, հիվանդությունների կանխարգելումը, պետական հիգիենիկ և հակահամաճարակային վերահսկողությունը

Համաճարակաբանական դիտարկումը, հիվանդությունների կանխարգելումը լիազոր մարմնի գործունեությունն է՝ ուղղված Արցախի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովմանը:

Լիազոր մարմինն իրականացնում է՝

- համաճարակաբանական դիտարկում՝ առողջության, հիվանդությունների և դրանց տարածման պատճառների ու պայմանների հետ կապված տվյալների շարունակական և համակարգված հավաքում, վերլուծություն, գնահատում, կանխատեսում և իր իրավասության շրջանակներում որոշումների ընդունում.

- հիվանդությունների կանխարգելում՝ դրանց տարածման նվազեցման կամ բացառման ուղղությամբ գործունեության պլանավորում, համալիր միջոցառումների իրականացում և գնահատում.

- բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման նպատակով անհրաժեշտ առաջարկությունների մշակում.

- վարակիչ, զանգվածային ոչ վարակիչ հիվանդությունների և թունավորումների վարչական վիճակագրական հաշվառում:

Պետական հիգիենիկ և հակահամաճարակային վերահսկողությունը Վերահսկողություն իրականացնող մարմնի գործունեությունն է Արցախի Հանրապետության սանիտարական օրենսդրության խախտումների հայտնաբերման, կանխարգելման միջոցով:

Վերահսկողություն իրականացնող մարմնի կողմից պետական հիգիենիկ և հակահամաճարակային վերահսկողությունը ներառում է՝

- վերահսկողությունը հիմնարկների, կազմակերպությունների, քաղաքացիների կողմից սանիտարական կանոնների, հիգիենիկ և հակահամաճարակային միջոցառումների իրականացման նկատմամբ.

- Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով պաշտոնատար անձանց և քաղաքացիների նկատմամբ համապատասխան միջոցների կիրառումը, այդ թվում՝ պատասխանատվության.

- պետական հիգիենիկ և հակահամաճարակային վերահսկողության ապահովման նպատակով անհրաժեշտ առաջարկությունների մշակումը.

- վարակիչ, զանգվածային ոչ վարակիչ հիվանդությունների և թունավորումների առաջացման, ինչպես նաև տարածման պատճառների ու պայմանների հայտնաբերումը.

- վարակիչ, պրոֆեսիոնալ, զանգվածային ոչ վարակիչ հիվանդությունների և թունավորումների վիճակագրական տվյալների հավաքումը և վերլուծությունների իրականացումը:»:

Հոդված 21. Օրենքի 25-րդ հոդվածում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական հիգիենիկ և հակահամաճարակային ծառայությանը» բառերը փոխարինել «Վերահսկողություն իրականացնող մարմին» բառերով:

Հոդված 22. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում հրապարակվելուց հետո՝ անմիջապես:

**ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2021թ. նոյեմբերի 12
Ստեփանակերտ
ՀՕ-108-Ն

ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2021 թվականի
նոյեմբերի 10-ին

**«ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» 2004 թվականի մարտի 10-ի ՀՕ-100 օրենքում (այսուհետ՝ Օրենք) «Լեռնային Ղարաբաղի» բառերը փոխարինել «Արցախի» բառով:

Հոդված 2. Օրենքի նախաբանը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
«Մույն օրենքը սահմանում է արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության հիմքերն ու կազմակերպումը, այդ բնագավառում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների (այսուհետ՝ ձեռնարկություններ, հիմնարկներ, կազմակերպություններ), պաշտոնատար անձանց, Արցախի Հանրապետության քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց և օտարերկրյա քաղաքացիների (այսուհետ՝ քաղաքացիներ) իրավունքներն ու պարտականությունները:»:

Հոդված 3. Օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի՝
1) 2-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
«**բնակչության պաշտպանություն**՝ արտակարգ իրավիճակում մարդկանց կյանքի և առողջության պաշտպանությունը, վտանգների կանխմանը և նվազեցմանը, բնականոն կենսագործունեության ապահովմանը և վերականգմանն ուղղված իրավական, կազմակերպական, ինժեներատեխնիկական փոխկապակցված միջոցառումների համալիր.».
2) 5-րդ պարբերությունում «աշխատանքների կատարում» բառերից հետո լրացնել «, ինչպես նաև կարանտին սահմանելու մասին Արցախի Հանրապետության կառավարության որոշմամբ կիրառվող միջոցառումների իրականացում» բառերը.
3) 6-րդ պարբերությունում «մաս» բառից հետո լրացնել «(կարանտին սահմանելու դեպքում՝ համաճարակի գոտի)» բառերը.
4) 9-րդ պարբերությունում «և մանրէաբանական նյութերից» բառերը փոխարինել «, մանրէաբանական նյութերից և վարակիչ հիվանդություններից» բառերով:

Հոդված 4. Օրենքի 2-րդ հոդվածում «Հանրապետության» բառից հետո լրացնել «վավերացրած» բառը:

Հոդված 5. Օրենքի 3-րդ հոդվածում, 9-րդ հոդվածի 4-րդ մասում, 11-րդ հոդվածում, 13-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետում և 22-րդ հոդվածում «կազմակերպություններ» բառի հոլովաձևերը փոխարինել «ձեռնարկություններ, հիմնարկներ, կազմակերպություններ» բառերի համապատասխան հոլովաձևերով:

Հոդված 6. Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասում «զ» կետի վերջակետը փոխարինել միջակետով և լրացնել հետևյալ բովանդակությամբ «է» կետ.
«է) օրենքով նախատեսված այլ միջոցառումներ:»:

Հոդված 7. Օրենքի 5-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի՝

ա. «դ» կետում «ու մանրէաբանական նյութերից» բառերը փոխարինել «, մանրէաբանական նյութերից և վարակիչ հիվանդություններից» բառերով,

բ. «ժգ» կետի վերջակետը փոխարինել միջակետով և լրացնել հետևյալ բովանդակությամբ «ժէ» կետ.

«ժէ) կարանտին սահմանելու դեպքում օրենքով սահմանված միջոցառումների իրականացումը:»:

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ մաս.

«Արտակարգ իրավիճակի հիմք հանդիսացող համաճարակով պայմանավորված կարանտին սահմանելու դեպքում բնակչության պաշտպանության հիմնական միջոցառումները և դրանց իրականացման կարգն ու առանձնահատկությունները սահմանվում են սույն օրենքի 4.1-ին գլխով:»:

Հոդված 8. Օրենքի 7-րդ հոդվածում լրացնել հետևյալ բովանդակությամբ նախադասություն.

«Արտակարգ իրավիճակի հիմք հանդիսացող համաճարակով պայմանավորված կարանտին սահմանելու դեպքում բնակչության պաշտպանությունն իրականացվում է սույն օրենքի 4.1-ին գլխով սահմանված միջոցառումների կիրառմամբ:»:

Հոդված 9. Օրենքի 10-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 10. Բնակչության անհատական պաշտպանությունը

Բնակչության անհատական պաշտպանությունը մարդկանց շնչառական օրգանները և մաշկը պաշտպանում է թունավոր գոլորշիների կաթիլներից, աերոզոլների ներգործությունից, ճառագայթային փոշիներից, ախտահարույց մանրէներից, թունավոր նյութերի ազդեցությունից, վարակիչ հիվանդություններից և թունավորումներից:

Սույն օրենքի 4.1-ին գլխով սահմանված կարգով կարանտին սահմանելու դեպքում բնակչության անհատական պաշտպանության միջոցների կիրառման անհրաժեշտությունը սահմանվում է կարանտին սահմանելու մասին Արցախի Հանրապետության կառավարության որոշմամբ, իսկ կիրառվող անհատական պաշտպանության միջոցների ցանկը, դրանց կիրառման դեպքերը և կարգը՝ առողջապահության բնագավառում պետական կառավարման համակարգի լիազոր մարմնի ղեկավարի կողմից՝ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտով:»:

Հոդված 10. Օրենքի 4-րդ գլխի վերնագրում «ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ» բառը փոխարինել «ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ, ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ» բառերով:

Հոդված 11. Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասում «ը» կետի վերջակետը փոխարինել միջակետով և լրացնել հետևյալ բովանդակությամբ «թ» և «ժ» կետեր.

«թ» արտակարգ իրավիճակի հիմք հանդիսացող համաճարակի դեպքում ընդունում է որոշում կարանտին սահմանելու մասին.

ժ) կարանտին սահմանելու դեպքում իրականացնում է սույն օրենքի 4.1-ին գլխով սահմանված այլ լիազորություններ:»:

Հոդված 12. Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետում «Հանրապետության» բառից հետո լրացնել «կառավարության» բառը:

Հոդված 13. 17-րդ հոդվածի՝

1) վերնագրում «Կազմակերպությունների» բառը փոխարինել «Ձեռնարկությունների, հիմնարկների, կազմակերպությունների» բառերով.

2) 1-ին մասում՝

ա. «Կազմակերպություններն» բառը փոխարինել «Ձեռնարկությունները, հիմնարկները, կազմակերպություններն» բառերով,

բ. «բ» կետի վերջակետը փոխարինել միջակետով և լրացնել հետևյալ բովանդակությամբ «գ» կետ.

«գ) իրականացնում են կարանտին սահմանելու մասին Արցախի Հանրապետության կառավարության որոշմամբ կիրառվող միջոցառումները, ինչպես նաև աջակցում այդ միջոցառումների կազմակերպմանը և իրականացմանը:».

3) 2-րդ մասում «պաշտպանությունը» բառից հետո լրացնել «՝ Արցախի Հանրապետության կառավարության սահմանած կարգով» բառերը:

Հոդված 14. Օրենքում լրացնել հետևյալ բովանդակությամբ 4.1-ին գլուխ.

«ԳԼՈՒԽ 4.1

**ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՀԻՄՔ ՀԱՆՊԻՍԱՑՈՂ ՀԱՄԱՃԱՐԱԿՈՎ
ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԿԱՐԱՆՏԻՆ ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ
ԲՆԱԿՇՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ԵՎ
ԴՐԱՆՑ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Հոդված 17.1. Սույն գլխի կիրառման շրջանակները

Արտակարգ իրավիճակի հիմք հանդիսացող համաճարակով պայմանավորված կարանտին սահմանելու դեպքում բնակչության պաշտպանության և սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման առանձնահատկությունները, կարանտին սահմանելու մասին որոշմամբ կիրառվող միջոցառումների ցանկը, միջոցառումների կազմակերպման և իրականացման համար իրավասու մարմինները, միջոցառումների կազմակերպման և իրականացման կարգն ու առանձնահատկությունները սահմանվում են սույն գլխով:

Հոդված 17.2. Արտակարգ իրավիճակի հիմք հանդիսացող համաճարակով պայմանավորված կարանտին սահմանելու դեպքում կիրառվող միջոցառումները

Արտակարգ իրավիճակի հիմք հանդիսացող համաճարակով պայմանավորված կարանտին (այսուհետ սույն գլխում՝ կարանտին) սահմանելու դեպքում կարող են կիրառվել հետևյալ միջոցառումները.

ա) «Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» օրենքով սահմանված կարանտինային և այլ սանիտարահամաճարակային միջոցառումներ՝ սույն գլխով սահմանված առանձնահատկությունների հաշվառմամբ.

բ) հավաքներ կամ հանրային միջոցառումներ կազմակերպելու, անցկացնելու կամ դրանց մասնակցելու սահմանափակումներ.

գ) իրավաբանական անձանց գործունեության սանիտարահամաճարակային անվտանգության կանոնների սահմանում.

դ) ապրանքների փոխադրման սահմանափակումներ.

ե) կրթական հաստատությունների գործունեության սահմանափակումներ.

զ) սահմանափակումներ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում և այլ հաստատություններում:

Սույն հոդվածով սահմանված միջոցառումները կիրառվում են բացառապես կարանտին սահմանելու հիմք հանդիսացած հանգամանքները, ներառյալ՝ հանրության համար վտանգավոր վարակիչ հիվանդությունների տարածումը կանխելու, դրանց հետևանքները վերացնելու, անձանց և հանրության առողջությունը պահպանելու նպատակով և պետք է համաչափ լինեն այդ նպատակին: Կարանտինի պայմաններում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների գործողությունները պետք է համարժեք լինեն կարանտին սահմանելու հիմք հանդիսացած հանգամանքներով պայմանավորված իրավիճակին:

Սույն հոդվածով սահմանված միջոցառումների կիրառումը չի կարող խոչընդոտել Ազգային ժողովի, դատարանների, Մարդու իրավունքների պաշտպանի, զինված ուժերի և այլ գործերի բնականոն գործունեությունը:

Հոդված 17.3. Կարանտինային և այլ սանիտարահամաճարակային միջոցառումների կիրառման առանձնահատկությունները արտակարգ իրավիճակի հիմք հանդիսացող համաճարակի դեպքում

Կարանտին սահմանելու դեպքում, հաշվի առնելով սույն գլխով սահմանված առանձնահատկությունները, կարող են կիրառվել «Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» օրենքով սահմանված կարանտինային և սանիտարահամաճարակային հետևյալ միջոցառումները.

ա) համաճարակի (կարանտինային) գոտում մուտքի և ելքի հատուկ ռեժիմի սահմանում.

բ) պետական սահմանով հաղորդակցության ժամանակավոր դադարեցում կամ սահմանափակում.

գ) անձանց ազատ տեղաշարժվելու իրավունքի և տրանսպորտային միջոցների տեղաշարժման սահմանափակումներ.

դ) օբսերվացիա.

ե) ինքնամեկուսացում.

զ) մեկուսացում:

Կարանտին սահմանելու մասին Արցախի Հանրապետության կառավարության որոշմամբ (այսուհետ սույն գլխում՝ կարանտին սահմանելու մասին որոշում) կարող է սահմանվել մուտքի և ելքի հատուկ ռեժիմ Արցախի Հանրապետության ամբողջ տարածքում կամ Արցախի Հանրապետության առանձին տարածքներում: Կարանտին սահմանելու մասին որոշմամբ կարող է արգելվել Արցախի Հանրապետության քաղաքացիություն չունեցող անձանց մուտքը Արցախի Հանրապետության տարածք, Արցախի Հանրապետության քաղաքացիների ելքը Արցախի Հանրապետության տարածքից, ինչպես նաև սահմանվել Արցախի Հանրապետություն մուտքի հատուկ կանոններ:

Արցախի Հանրապետության տարածք մուտք գործող անձանց նկատմամբ Արցախի Հանրապետության տարածք մուտք գործելուց անմիջապես հետո կարանտին սահմանելու մասին որոշմամբ սահմանված կարգով առողջապահության ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը սահմանային բժշկասանիտարական հսկիչ կետերում կարող է կիրառել սույն հոդվածի 1-ին մասով սահմանված կարանտինային և սանիտարահամաճարակային միջոցառումները:

Հոդված 17.4. Հավաքներ կամ հանրային միջոցառումներ կազմակերպելու, անցկացնելու կամ դրանց մասնակցելու սահմանափակումները

Կարանտին սահմանելու մասին որոշմամբ կարող են կիրառվել հավաքներ կազմակերպելու, անցկացնելու կամ դրանց մասնակցելու սահմանափակումներ, ինչպես նաև հանրային միջոցառումներ կազմակերպելու, անցկացնելու կամ դրանց մասնակցելու արգելքներ կամ սահմանափակումներ:

Սույն հոդվածի իմաստով հանրային են համարվում անձանց սոցիալական, մշակութային, կրթական, սպորտային կամ այլ ժամանցային կարիքների բավարարմանն ուղղված միջոցառումները, այդ թվում՝

ա) համերգները, ցուցահանդեսները, ցուցադրությունները, թատերական ներկայացումները, կրթական այլ միջոցառումներ:

բ) տոնական և հիշատակի միջոցառումները, ներառյալ՝ ծննդյան (տարեդարձի), հարսանյաց (նշանադրության) միջոցառումները, հոգեհանգստի և հուղարկավորության արարողությունները:

Հավաքներ կազմակերպելու, անցկացնելու կամ դրանց մասնակցելու սահմանափակումների կիրառման նկատմամբ հսկողությունն իրականացնում է Արցախի Հանրապետության ներքին գործերի նախարարության համակարգում գործող Արցախի Հանրապետության ոստիկանությունը (այսուհետ՝ Ոստիկանություն):

Հանրային միջոցառումներ կազմակերպելու, անցկացնելու կամ դրանց մասնակցելու սահմանափակումների կամ արգելքների կիրառման նկատմամբ հսկողությունն իրականացնում են Ոստիկանությունը և կարանտին սահմանելու մասին որոշմամբ նախատեսված տեսչական մարմինները: Հանրային միջոցառումներ կազմակերպելու, անցկացնելու կամ դրանց մասնակցելու սահմանափակումների կամ արգելքների պահանջների խախտումներ հայտնաբերելու դեպքում կիրառվում են պատասխանատվության միջոցներ:

Հանրային միջոցառումներ կազմակերպելու, անցկացնելու կամ դրանց մասնակցելու սահմանափակումների կամ արգելքների պահանջների խախտումներ հայտնաբերելու դեպքում Ոստիկանությունը հանրային միջոցառում կազմակերպելու, անցկացնելու կամ հանրային միջոցառումը՝ դրան մասնակցելու սահմանափակումների կամ արգելքների պահանջներին համապատասխանեցնելու կամ դադարեցնելու պահանջով դիմում է հանրային միջոցառման կազմակերպչին, որը պարտավոր է այդ մասին անմիջապես տեղեկացնել հանրային միջոցառման մասնակիցներին: Հանրային միջոցառման կազմակերպչի բացակայության կամ միջոցառման մասնակիցների կողմից Ոստիկանության պահանջը չկատարվելու դեպքում Ոստիկանության ներկայացուցիչը մասնակիցներից պահանջում է դադարեցնել հանրային միջոցառումը՝ սահմանելով ողջամիտ ժամկետ: Միաժամանակ Ոստիկանության կամ համապատասխան տեսչական մարմնի ներկայացուցիչը հանրային միջոցառման մասնակիցներին նախազգուշացնում է սահմանված ժամկետում հանրային միջոցառումը կամովին չդադարեցնելու դեպքում հանրային միջոցառումը ցրելու, «Ոստիկանության մասին» օրենքով նախատեսված հատուկ միջոցներ, ինչպես նաև վարչական պատասխանատվության միջոցներ կիրառելու Ոստիկանության լիազորության մասին:

Հոդված 17.5. Տնտեսական գործունեության և ծառայությունների մատուցման, ինչպես նաև այլ կազմակերպությունների գործունեության սանիտարահամաճարակային անվտանգության կանոնների սահմանումը

Կարանտին սահմանելու մասին որոշմամբ կարող են սահմանվել տնտեսական գործունեության առանձին տեսակների և ծառայությունների մատուցման, ինչպես նաև տնտեսական գործունեությամբ չգրադվող այլ կազմակերպությունների գործունեության սանիտարահամաճարակային անվտանգության կանոններ:

Կարանտին սահմանելու մասին որոշմամբ կարող է նախատեսվել կարանտին սահմանելու մասին որոշմամբ սահմանված՝ տնտեսական գործունեության տեսակներով զբաղվող կամ ծառայություններ մատուցող տնտեսավարող սուբյեկտների և տնտեսական գործունեությամբ չգրադվող այլ կազմակերպությունների (այսուհետ սույն հոդվածում՝ կազմակերպություններ) կողմից սանիտարահամաճարակային անվտանգության կանոնների կիրառման նկատմամբ վերահսկողության իրականացում:

Սույն հոդվածով նախատեսված սահմանափակումների պահպանման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է առողջապահության ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը, բացառությամբ սննդամթերքի վաճառքով զբաղվող առևտրի օբյեկտների, սննդամթերք արտադրող տնտեսավարող սուբյեկտների կամ հանրային սննդի օբյեկտների, որոնց դեպքում սույն հոդվածով նախատեսված սահմանափակումների պահպանման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է սննդամթերքի անվտանգության ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը:

Սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված վերահսկողությունը համապատասխան տեսչական մարմինն իրականացնում է կազմակերպություններ ստուգայցերի միջոցով՝ տվյալ տեսչական մարմնի ղեկավարի գրավոր հանձնարարությամբ: Այլ տեսչական մարմինները կարող են փոխօգնության շրջանակներում ներգրավվել ոլորտային ստուգայցերի իրականացմանը՝ Արցախի Հանրապետության նախագահի հանձնարարականով:

Ստուգայցն իրականացվում է առանց նախնական ծանուցման: Ստուգայցի նպատակը չի կարող տարբերվել, ինչպես նաև ստուգայցն իրականացնող տեսչական մարմնի ներկայացուցչի գործողությունները չեն կարող դուրս գալ սույն գլխով սահմանված և կարանտին սահմանելու մասին որոշմամբ կիրառվող միջոցառումների կազմակերպման, իրականացման և սահմանափակումների պահպանման նկատմամբ վերահսկողության իրականացման նպատակից:

Ստուգայցի ընթացքում կարանտին սահմանելու մասին որոշմամբ կիրառվող միջոցառումների և սահմանափակումների խախտումներ հայտնաբերելու դեպքում վերահսկողություն իրականացնող համապատասխան տեսչական մարմնի ներկայացուցիչը նախազգուշացնում է կազմակերպությանը (այդ թվում՝ գյուղատնտեսական արտադրանքի շուկաներում վաճառք իրականացնող ֆիզիկական անձանց) միջոցառումների և սահմանափակումների խախտման մասին, տալիս հանձնարարականներ բացահայտված խախտումները վերացնելու վերաբերյալ՝ դրանց կատարման համար սահմանելով ժամկետներ:

Ստուգայցի արդյունքներով կարանտին սահմանելու մասին որոշմամբ կիրառվող միջոցառումների և սահմանափակումների խախտումներ հայտնաբերելու դեպքում վերահսկողություն իրականացնող համապատասխան տեսչական մարմինը կիրառում է վարչական պատասխանատվության միջոցներ:

Կարանտին սահմանելու դեպքում կազմակերպությունների նկատմամբ հսկողության իրականացմանը կարող են մասնակցել Ոստիկանությունը և կարանտին սահմանելու մասին որոշմամբ սահմանված այլ տեսչական մարմիններ, որոնք կարանտին սահմանելու մասին որոշմամբ կիրառվող

միջոցառումների խախտումներ հայտնաբերելու դեպքում պարտավոր են արձանագրել համապատասխան խախտումները և անմիջապես այդ մասին տեղեկացնել վերահսկողություն իրականացնող համապատասխան տեսչական մարմին՝ սույն հոդվածի 4-7-րդ մասերով սահմանված կարգով վերահսկողություն իրականացնելու համար:

Սույն հոդվածով նախատեսված սանիտարահամաճարակային անվտանգության կանոնները սահմանում է լիազոր մարմնի ղեկավարը:

Հոդված 17.6. Ապրանքների փոխադրման սահմանափակումները

Կարանտին սահմանելու մասին որոշմամբ կարող են սահմանվել որոշակի ապրանքների կամ դրանց առանձին խմբաքանակների արտահանման կամ ներմուծման սահմանափակումներ:

Հոդված 17.7. Կրթական հաստատությունների գործունեության սահմանափակումները

Կարանտին սահմանելու մասին որոշմամբ կարող է սահմանվել, որ պետական, համայնքային և ոչ պետական հանրակրթական (այդ թվում՝ նախադպրոցական), նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններում, արտադպրոցական դաստիարակություն իրականացնող (մանկապատանեկան ստեղծագործական և գեղագիտական կենտրոններ, երաժշտական, նկարչական և արվեստի դպրոցներ, ակումբներ, մարզադպրոցներ, առողջարարական ճամբարներ և արտադպրոցական դաստիարակություն իրականացնող այլ կազմակերպություններ) կազմակերպություններում, ինչպես նաև Արցախի Հանրապետությունում գործող միջազգային ուսումնական հաստատություններում (այսուհետ՝ կրթական հաստատություն) ուսումնական գործընթացը կարող է իրականացվել միայն առողջապահության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի ղեկավարի ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտով սահմանված սանիտարահամաճարակային անվտանգության կանոնների պահպանմամբ: Սույն մասով սահմանված սահմանափակումը չի տարածվում հեռավար (դիստանցիոն) իրականացվող կրթական ծրագրի, ինչպես նաև ռազմական ուսումնական հաստատությունների վրա:

Կրթական հաստատությունների գործունեության սահմանափակումների նկատմամբ վերահսկողություն իրականացնում է առողջապահության ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը:

Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված վերահսկողությունը տեսչական մարմինն իրականացնում է կրթական հաստատություններ ստուգայցերի միջոցով տեսչական մարմնի ղեկավարի գրավոր հանձնարարությամբ: Ստուգայցի նպատակը չի կարող տարբերվել, ինչպես նաև ստուգայցն իրականացնող տեսչական մարմնի ներկայացուցչի գործողությունները չեն կարող դուրս գալ սույն գլխով սահմանված և կարանտին սահմանելու մասին որոշմամբ կիրառվող միջոցառումների կազմակերպման, իրականացման և սահմանափակումների պահպանման նկատմամբ վերահսկողության իրականացման նպատակից:

Ստուգայցի ընթացքում կարանտին սահմանելու մասին որոշմամբ կիրառվող միջոցառումների և սահմանափակումների խախտումներ հայտնաբերելու դեպքում տեսչական մարմնի ներկայացուցիչը նախազգուշացնում է կրթական հաստատությանը միջոցառումների և սահմանափակումների խախտման մասին, տալիս հանձնարարականներ

բացահայտված խախտումները վերացնելու վերաբերյալ՝ դրանց կատարման համար սահմանելով ժամկետներ:

Մտուգայցի արդյունքներով կարանտին սահմանելու մասին որոշմամբ կիրառվող միջոցառումների և սահմանափակումների խախտումներ հայտնաբերվելու դեպքում կիրառվում են վարչական պատասխանատվության միջոցներ:

Կարանտին սահմանելու դեպքում կրթական հաստատության գործունեության նկատմամբ վերահսկողության իրականացմանը կարող է մասնակցել նաև կրթության ոլորտի տեսչական մարմինը, որը կարանտին սահմանելու մասին որոշմամբ կիրառվող միջոցառումների և սահմանափակումների խախտումներ հայտնաբերելու դեպքում պարտավոր է արձանագրել համապատասխան խախտումները և անմիջապես այդ մասին տեղեկացնել առողջապահության ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնին:

Հոդված 17.8. Սահմանափակումները պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում և այլ հաստատություններում

Կարանտինի պայմաններում պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում որպես սահմանափակում կարող է կիրառվել համապատասխան մարմնի աշխատանքների կազմակերպման, գործառույթների իրականացման ձևերի և եղանակների ժամանակավոր փոփոխություն՝ կարանտին սահմանելու մասին որոշմամբ սահմանված կարգին համապատասխան: Սույն մասով սահմանված սահմանափակումները կիրառվում են՝

ա) պետական կառավարման համակարգի մարմիններում՝ կարանտին սահմանելու մասին որոշմամբ.

բ) տեղական ինքնակառավարման մարմիններում՝ համայնքի ավագանու որոշմամբ.

գ) այլ մարմիններում՝ համապատասխան մարմնի ղեկավարի որոշմամբ:

Կարանտին սահմանելու մասին որոշմամբ նախատեսված լինելու դեպքում կարող են կիրառվել այլ հաստատությունների գործունեության սահմանափակումներ՝ համապատասխան հաստատության ղեկավարի որոշմամբ: Այդ հաստատությունների և կիրառվող սահմանափակումների ցանկը սահմանվում է կարանտին սահմանելու մասին որոշմամբ:

Հոդված 17.9. Սույն գլխով նախատեսված ակտերի և գործողությունների (անգործության) բողոքարկումը

Կարանտինի պայմաններում սույն գլխով սահմանված միջոցառումների կիրառման շրջանակներում սույն գլխով նախատեսված մարմինների կայացրած ակտերը ենթակա են անհապաղ կատարման, բացառությամբ կարանտին սահմանելու մասին որոշմամբ կիրառվող միջոցառումների խախտման դեպքում կայացված ակտերի:

Կարանտինի պայմաններում սույն գլխով սահմանված միջոցառումների կիրառման շրջանակներում սույն գլխով նախատեսված մարմինների կայացրած ակտերը, գործողությունները (անգործությունը) կարող են բողոքարկվել վարչական կարգով կամ վարչական դատարան՝ օրենքով սահմանված ժամկետներում: Սույն մասով նախատեսված բողոքարկումը չի կասեցնում համապատասխան ակտի կատարումը, բացառությամբ կարանտին սահմանելու մասին որոշմամբ կիրառվող միջոցառումների խախտման դեպքում կայացված ակտերի:»:

Հոդված 15. Օրենքի 18-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 18. Արցախի Հանրապետության քաղաքացիների պարտականությունները

Արցախի Հանրապետության յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է մասնակցել արտակարգ իրավիճակների հետևանքներից բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացմանը՝ Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:»:

Հոդված 16. Օրենքի 19-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 19. Անձանց իրավունքների երաշխիքները արտակարգ իրավիճակներում

1. Յուրաքանչյուր ֆիզիկական անձ իրավունք ունի ստանալու ճշգրիտ տեղեկություն արտակարգ իրավիճակների, դրանց առաջացման վտանգի և իր պաշտպանվածության աստիճանի մասին, եթե այդպիսի տեղեկության տրամադրումը արգելված չէ օրենքով:

2. Ֆիզիկական և իրավաբանական անձինք, որոնց գույքը կամ այլ միջոցներն օգտագործվել են արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացման նպատակով, իրավունք ունեն ստանալու համարժեք փոխհատուցում՝ Արցախի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:»:

Հոդված 17. Օրենքի 22-րդ հոդվածում լրացնել հետևյալ բովանդակությամբ նախադասություն.

«Կարանտին սահմանելու դեպքում սույն հոդվածով նախատեսված նյութատեխնիկական ապահովման և ֆինանսավորման դեպքերը, կարգն ու պայմանները սահմանվում են Արցախի Հանրապետության կառավարության որոշմամբ:»:

Հոդված 18. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում հրապարակվելուց հետո՝ անմիջապես:

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2021թ. նոյեմբերի 12
Ստեփանակերտ
ՀՕ-109-Ն

ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2021 թվականի
նոյեմբերի 10-ին

ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2008 թվականի դեկտեմբերի 17-ի Վարչական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 117.10-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը «ողջամիտ ժամկետում» բառերից հետո լրացնել «, բացառությամբ սույն հոդվածով նախատեսված դեպքերի» բառերով.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ մաս.

«3. Վերաքննիչ դատարանը սույն օրենսգրքի 28.2-րդ գլխով նախատեսված գործերի քննության արդյունքում կայացված գործն ըստ էության լուծող դատական ակտերի դեմ բերված վերաքննիչ բողոքը քննում և որոշում է կայացնում գործը ստանալու պահից երկամսյա ժամկետում:»:

Հոդված 2. Օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 28.2-րդ գլխով.

«ԳԼՈՒԽ 28.2

ՎԱՐԱՏԻՆԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՕՐԵՆՔՈՎ ՄԱՀՄԱՆՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԸՆԴՈՒՆՎԱԾ ԱԿՏԵՐԻ ԻՐԱՎԱՉԱՓՈՒԹՅԱՆ ՎԻՃԱՐԿՄԱՆ ԳՈՐԾԵՐԻ ՎԱՐՈՒՅԹԸ

Հոդված 161.2. Կարանտինի պայմաններում օրենքով սահմանված միջոցառումների կիրառման շրջանակներում ընդունված ակտերի իրավաչափության վիճարկման գործերի վարույթը

1. Վարչական դատարանին ընդդատյա են «Բնակչության սահմանափակման շրջանակներում անվտանգության ապահովման մասին» և «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» օրենքներին համապատասխան սահմանված կարանտինի (այսուհետ սույն գլխում՝ կարանտին) պայմաններում օրենքով սահմանված միջոցառումների կիրառման շրջանակներում իրավասու մարմինների ընդունած վարչական ակտերի, գործողության (անգործության) վիճարկման վերաբերյալ գործերը:

2. Սույն գլխով սահմանված կանոնները չեն տարածվում Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով նախատեսված կարանտին սահմանելու մասին որոշմամբ կիրառվող սահմանափակումների խախտման դեպքում կայացված վարչական ակտերի, գործողության (անգործության) վիճարկման վերաբերյալ գործերի քննության վրա:

Հոդված 161.3. Կարանտինի պայմաններում օրենքով սահմանված միջոցառումների կիրառման շրջանակներում ընդունված ակտերի իրավաչափության վիճարկման վերաբերյալ դիմումը

1. Կարանտինի պայմաններում օրենքով սահմանված միջոցառումների կիրառման շրջանակներում ընդունված ակտերի իրավաչափության վիճարկման վերաբերյալ դիմումը կարող է ներկայացվել կարանտինի

պայմաններում օրենքով սահմանված միջոցառումների կիրառման շրջանակներում իրավասու մարմինների ընդունած վարչական ակտերի կամ գործողության (անգործության) վերաբերյալ օրենքով սահմանված կարգով իրազեկվելու պահից մեկամսյա ժամկետում:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված դիմումին ներկայացվում են սույն օրենսգրքի 72-րդ և 73-րդ հոդվածներով նախատեսված պահանջները:

Հոդված 161.4. Կարանտինի պայմաններում օրենքով սահմանված միջոցառումների կիրառման շրջանակներում ընդունված ակտերի իրավաչափության վիճարկման գործերի քննության կարգը և ժամկետները

1. Սույն գլխով նախատեսված գործերի քննությունն իրականացվում է սույն օրենսգրքով նախատեսված գործի քննության ընդհանուր կանոնների համաձայն՝ այն հատուկ կանոնների պահպանմամբ, որոնք սահմանված են սույն գլխի դրույթներով:

2. Սույն գլխով նախատեսված գործերը վարչական դատարանը քննում է գրավոր ընթացակարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ տվյալ գործը վարչական դատարանի գնահատմամբ ձեռք է բերել հասարակական մեծ հնչեղություն, կամ դրա բանավոր դատաքննությունը կնպաստի գործի հանգամանքների առավել արագ բացահայտմանը:

3. Սույն գլխով նախատեսված գործերի բանավոր քննության դեպքում դատարանը կարող է թույլատրել դիմողին մասնակցելու դատական նիստին տեսաձայնային հեռահաղորդակցության միջոցների կիրառմամբ, եթե դատական նիստերի դահլիճում տեղադրված է նման հաղորդակցության հնարավորությունն ապահովող համակարգ: Տեսաձայնային հեռահաղորդակցության միջոցների կիրառմամբ չի կարող իրականացվել առերես հարցաքննություն:

4. Սույն գլխով նախատեսված գործերը քննվում են դիմումը վարույթ ընդունելու պահից տասնօրյա ժամկետում:

5. Սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված գործի քննության ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ ևս տասը օրով:

Հոդված 161.5. Վարչական դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտը

1. Սույն գլխով նախատեսված գործերը քննելու արդյունքում վարչական դատարանը կայացնում է հետևյալ դատական ակտերից մեկը.

1) դիմումը մերժելու և իրավասու մարմնի վարչական ակտը կամ գործողությունը (անգործությունը) ուժի մեջ թողնելու վերաբերյալ.

2) ամբողջությամբ կամ մասնակիորեն դիմումը բավարարելու և իրավասու մարմնի վարչական ակտը կամ գործողությունը (անգործությունը) ամբողջությամբ կամ մասնակիորեն անվավեր ճանաչելու մասին:

2. Վարչական դատարանի՝ սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված գործն ըստ էության լուծող դատական ակտն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել վերաքննության կարգով՝ հրապարակման պահից տասնօրյա ժամկետում:»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից հետո՝ անմիջապես:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2021թ. նոյեմբերի 12
Ստեփանակերտ
ՀՕ-110-Ն

ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2021 թվականի
նոյեմբերի 10-ին

**ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. 2013 թվականի ապրիլի 25-ի Քրեական օրենսգրքում (այսուհետ՝ Օրենսգիրք) լրացնել հետևյալ բովանդակությամբ 288.1-ին և 288.2-րդ հոդվածները.

«Հոդված 288.1. Արտակարգ իրավիճակի ընթացքում մեկուսացման կամ ինքնամեկուսացման կանոնները կամ ազատ տեղաշարժվելու իրավունքի այլ սահմանափակումները խախտելը

1. Արտակարգ իրավիճակի ընթացքում մեկուսացման կամ ինքնամեկուսացման կանոնները կամ ազատ տեղաշարժվելու իրավունքի այլ սահմանափակումները խախտելը, որն անգգուշությամբ առաջացրել է անձի վարակում՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը մեկ ամիս ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երկու տարի ժամկետով կամ առանց դրա:

2. Նույն արարքը, որն անգգուշությամբ ծանր վնաս է պատճառել մարդու առողջությանը կամ անգգուշությամբ առաջացրել է երկու կամ ավելի անձանց վարակում՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից յոթհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ մեկից երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

3. Նույն արարքը, որն անգգուշությամբ առաջացրել է մարդու մահ՝ պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից չորս տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

4. Մույն հոդվածի իմաստով մեկուսացում է համարվում անձանց, այդ թվում՝ հիվանդի կամ վարակվածի կամ նրանց հետ շփված անձանց (կոնտակտավորների) առանձնացումը դրա համար նախատեսված որոշակի տարածքում՝ այլ անձանց հետ անմիջական շփումը բացառելու և վարակի տարածումը կանխելու նպատակով:

5. Մույն հոդվածի իմաստով ինքնամեկուսացում է համարվում անձանց, այդ թվում՝ հիվանդի կամ վարակվածի կամ նրանց հետ շփված անձանց (կոնտակտավորների) առանձնացումն իրենց մշտական բնակության կամ իր նախընտրությամբ մեկ այլ վայրում՝ այլ անձանց հետ անմիջական շփումը սահմանափակելու և վարակի տարածումը կանխելու նպատակով:

Հոդված 288.2. Կարանտինի պայմաններում մեկուսացման (ինքնամեկուսացման) կամ անհատական պաշտպանության միջոցների կիրառման կանոնները խախտելը

1. Կարանտինի պայմաններում մեկուսացման (ինքնամեկուսացման) կամ անհատական պաշտպանության միջոցների կիրառման կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է անձի վարակում՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը մեկ ամիս ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երկու տարի ժամկետով կամ առանց դրա:

2. Նույն արարքը, որը՝

1) անզգուշությամբ մարդու առողջությանը պատճառել է ծանր վնաս.

2) անզգուշությամբ առաջացրել է երկու կամ ավելի անձանց վարակում՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից յոթհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ մեկից երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

3. Նույն արարքը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ՝ պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից չորս տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից հետո՝ անմիջապես:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2021թ. նոյեմբերի 12
Ստեփանակերտ
ՀՕ-111-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ

ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

2022 ԹՎԱԿԱՆԻ ՁՄԵՌԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ
ԵՎ ԶՈՐԱՅՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 4-րդ մասով՝ **ո թ ո շ ու մ եմ**.

1. 2022 թվականի հունվար-փետրվար ամիսներին անցկացնել Արցախի Հանրապետության արական սեռի այն քաղաքացիների պարտադիր զինվորական ծառայության ձևեռային գորակոչը, որոնց 18 տարին լրանում է մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ, ինչպես նաև այն քաղաքացիների, որոնց նախկինում տրված պարտադիր զինվորական ծառայության գորակոչից տարկետման իրավունքը դադարել է մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:

2. 2022 թվականի հունվար ամսում գորացրել օրենքով սահմանված ժամկետում պարտադիր զինվորական ծառայություն անցած զինծառայողներին:

3. Արցախի Հանրապետության կառավարությանը՝ սույն հրամանագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում, ընդունել հրամանագրի կիրարկումն ապահովող համապատասխան որոշում:

4. Սույն հրամանագիրն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2021թ. նոյեմբերի 5
Ստեփանակերտ
ՆՀ-3431-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ

ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
2005 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 6-Ի ՆՀ-238 ՀՐԱՄԱՆԱԳՐՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ **ո ր ո շ ու մ եմ**։

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահի 2005 թվականի հոկտեմբերի 6-ի «Հայրենիքին ակնառու ծառայություններ մատուցած անձանց համար դրամական պարգևատրում սահմանելու մասին» ՆՀ-238 հրամանագրի 2-րդ կետում «քսանապատիկը» բառը փոխարինել «հարյուրհիսնապատիկը» բառով։

2. Սույն հրամանագիրն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2021թ. նոյեմբերի 12
Ստեփանակերտ
ՆՀ-3477-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 13-Ի ՆԿ-9-Ն ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵԶ
ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԿՍՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասը և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ **ո ր ո շ ու մ եմ**։

1. Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի հոկտեմբերի 13-ի «Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին» ՆԿ-9-Ն կարգադրությամբ հաստատված հավելվածը լրացնել հետևյալ քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերով.

«Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի ռուսաց լեզվի զարգացման հարցերի բաժնի վարիչի պաշտոնի անձնագիր N 19.1».

«Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի ռուսաց լեզվի զարգացման հարցերի բաժնի գլխավոր մասնագետի պաշտոնի անձնագիր N 54.1».

«Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի ռուսաց լեզվի զարգացման հարցերի բաժնի առաջատար մասնագետի պաշտոնի անձնագիր N 74.1».

«Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի ռուսաց լեզվի զարգացման հարցերի բաժնի առաջին կարգի մասնագետի պաշտոնի անձնագիր N 84.1».

2. Մույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2021թ. նոյեմբերի 12
Մտեփանակերտ
ՆԿ-14-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

1 նոյեմբերի 2021թ.

N 1171-Ն

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ
ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԵՎ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2021 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 26-Ի N 145-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Արցախի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի 9-րդ հոդվածը և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. «Արցախի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի N 1 հավելվածի N 1 աղյուսակում կատարել վերաբաշխում և Արցախի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 26-ի «Արցախի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 145-Ն որոշմամբ սահմանված N 2 հավելվածի N 1 աղյուսակի ցուցանիշներում կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված
Արցախի Հանրապետության կառավարության
2021 թվականի նոյեմբերի 1-ի N 1171-Ն որոշման

**«ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ»
ՕՐԵՆՔԻ N 1 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1 ԱՂՅՈՒՄԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՎԵՐԱԲԱՇՏՈՒՄԸ
ԵՎ ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ
ՓԵՏՐՎԱՐԻ 26-Ի N 145-Ն ՈՐՈՇՄԱՆ N 2 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1 ԱՂՅՈՒՄԱԿԻ
ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

(հազար ՀՀ դրամ)

Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառուկան դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ֆինանսավորվող ծրագրերի և վերջիններս իրականացնող մարմինների անվանումները	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)			
				Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Իննամիս	Տարի
			ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱՌՄԵՐ	-	-	-	-
			այդ թվում՝	-	-	-	-
09			ԿՐԹՈՒԹՅՈՒՆ	-	-	-	(2 600,0)
	6		Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ	-	-	-	(2 600,0)
		1	Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ	-	-	-	(2 600,0)
		14	Ներառական կրթության միջոցառումներ	-	-	-	(2 600,0)
			ԱՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	-	-	-	(2 600,0)
11			ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ԶՂԱՍՎՈՂ ԾԱՌՄԵՐ	-	-	-	2 600,0
	1		Պետական բյուջեի և համայնքների պահուստային ֆոնդեր	-	-	-	2 600,0
		1	Պետական բյուջեի պահուստային ֆոնդեր	-	-	-	2 600,0
		01	Պետական բյուջեի պահուստային ֆոնդեր	-	-	-	2 600,0
			ԱՀ կառավարություն	-	-	-	2 600,0

ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

2 նոյեմբերի 2021թ.

N 1172-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 8-Ի N 353-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՁ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունիսի 8-ի «Արցախի Հանրապետության գյուղական կամ քաղաքային բնակավայրերում մշտապես բնակվող երիտասարդ ընտանիքներին բնակելի տներ կառուցելու նպատակով անհատույց պետական ֆինանսական աջակցություն տրամադրելու մասին» N 353-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման, որոշմամբ հաստատված N1 հավելվածի, N2 հավելվածի վերնագրերում «ԵՐԻՏԱՍԱՐԴ» բառը հանել.

2) որոշման 1-ին կետի 1-ին և 2-րդ ենթակետերում և որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 1-ին կետում «երիտասարդ» բառը հանել.

3) որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 4-րդ կետի 1-ին ենթակետում «երիտասարդ» և «18-50 (ներառյալ) տարեկան» բառերը հանել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2021 թվականի սեպտեմբերի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

3 նոյեմբերի 2021թ.

N 1178-Ն

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ԲՅՈՒՋԵՏՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԵՎ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 26-Ի N 145-Ն
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Արցախի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի 9-րդ հոդվածը և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. «Արցախի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի N 1 հավելվածի NN 1, 3.2 և 3.3 աղյուսակներում կատարել վերաբաշխում և Արցախի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 26-ի «Արցախի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 145-Ն որոշմամբ սահմանված N 2 հավելվածի NN 1, 3.2 և 3.3 աղյուսակների ցուցանիշներում կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2021 թվականի հոկտեմբերի 28-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Աղյուսակ N 1

«ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ N 1 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄԸ ԵՎ ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 26-Ի N 145-Ն ՈՐՈՇՄԱՆ N 2 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1 ԱՂՅՈՒՍԱԿԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(հազար ՀՀ դրամ)

Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառույթի և դասերի, ֆինանսավորվող ծրագրերի և վերջիններս իրականացնող մարմինների անվանումները	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)			
				Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Իննամիս	Տարի
			ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՄԵՐ	-	-	-	-
			այդ թվում՝	-	-	-	-
09			ԿՐԹՈՒԹՅՈՒՆ	-	-	-	-
	2		Տարրական, հիմնական և միջնակարգ ընդհանուր կրթություն	-	-	-	-
		1	Տարրական, հիմնական և միջնակարգ ընդհանուր կրթություն	-	-	-	-
		01	Պետական աջակցություն ԱՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություններին	-	-	-	65 030,0
			Հաղորդի շրջանի վարչակազմ	-	-	-	31 530,0
			Շուշիի շրջանի վարչակազմ	-	-	-	33 500,0
		03	Պետական աջակցություն ԱՀ շրջանների պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենություններին	-	-	-	(65 030,0)
			Մարտունու շրջանի վարչակազմ	-	-	-	(65 030,0)

Աղյուսակ N 2

«ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ N 1 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 3.2 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄԸ ԵՎ ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 26-Ի N 145-Ն ՈՐՈՇՄԱՆ N 2 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 3.2 ԱՂՅՈՒՍԱԿԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բաժին	Խումբ	Դաս	Ծրագրերի և կատարողների անվանումները	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)			
				Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Իննամիս	Տարի
09	2	1	Հաղորդի շրջանի վարչակազմ	-	-	-	31 530,0
			«Հաղորդի Մ.Մանվելյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	-	-	-	31 530,0
			Շուշիի շրջանի վարչակազմ	-	-	-	33 500,0
			«Շուշիի Խ.Աբովյանի անվան միջնակարգ հոսքային դպրոց» ՊՈԱԿ	-	-	-	33 500,0
			ԸՆԴԱՄԵՆԸ	-	-	-	65 030,0

**«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ»
ՕՐԵՆՔԻ N 1 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 3.3 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՎԵՐԱԲԱՇՇՈՒՄԸ ԵՎ
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ
ՓԵՏՐՎԱՐԻ 26-Ի N 145-Ն ՈՐՈՇՄԱՆ N 2 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 3.3 ԱՂՅՈՒՍԱԿԻ
ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Բաժին	Խումբ	Դաս	Ծրագրերի և կատարողների անվանումները	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)			
				Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Իննամիս	Տարի
09	2	1	Մարտունու շրջանի վարչակազմ	-			(65 030,0)
			«Մարտունու շրջանի հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենություն» ՊՈԱԿ	-			(65 030,0)
			ԸՆԴԱՄԵՆԸ	-			(65 030,0)

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

8 նոյեմբերի 2021թ.

N 1192-Ն

ք. Ստեփանակերտ

**ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ կետը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանի Մարտակերտի քաղաքային համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության 0,0446 հեկտար արոտավայրը, 1,16 հեկտար այլ հողատեսքերը և պետական սեփականություն հանդիսացող անտառային նպատակային նշանակության 1,796 հեկտար թփուտները, համաձայն հավելվածի, փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության՝ ընդերքի օգտագործման հողերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

10 նոյեմբերի 2021թ.

N 1205-Ն

ք. Ստեփանակերտ

**ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ կետը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Արցախի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքի վարչական սահմաններում՝ Ա.Առաքելյան փողոցի 1-ին նրբանցք 13/1 հասցեում գտնվող, «ՊԱՆՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության սեփականություն հանդիսացող՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության 0,104556 հեկտար արդյունաբերական օբյեկտների հողերը, համաձայն հավելվածի, փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության՝ խառը կառուցապատման հողերի:

2. Առաջարկել Ստեփանակերտի քաղաքապետին՝ ապահովել հողամասի նպատակային նշանակության փոփոխման պահին առկա կադաստրային արժեքների տարբերության գանձումը, եթե հողամասի նպատակային նշանակության փոփոխումից հետո դրա կադաստրային արժեքն ավելի բարձր է, քան մինչև փոփոխումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

10 նոյեմբերի 2021թ.

N 1206-Ն

ք. Ստեփանակերտ

**ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ կետը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Արցախի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքի վարչական սահմաններում՝ Արեշ թաղամասի 7/2 հասցեում գտնվող, քաղաքացու սեփականություն հանդիսացող՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության 0,1131 հեկտար արդյունաբերական օբյեկտների հողերը, համաձայն հավելվածի, փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության՝ խառը կառուցապատման հողերի:

2. Առաջարկել Ստեփանակերտի քաղաքապետին՝ ապահովել հողամասի նպատակային նշանակության փոփոխման պահին առկա կադաստրային արժեքների տարբերության գանձումը, եթե հողամասի նպատակային նշանակության փոփոխումից հետո դրա կադաստրային արժեքն ավելի բարձր է, քան մինչև փոփոխումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

10 նոյեմբերի 2021թ.

N 1207-Ն

ք. Ստեփանակերտ

**ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ կետը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 27-ի N 350 որոշմամբ հաստատված՝ Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի Ասկերանի քաղաքային համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում, համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող քաղաքացու սեփականություն հանդիսացող՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության 0,038 հեկտար գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողերը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության՝ բնակելի կառուցապատման հողերի:

2. Առաջարկել Ասկերանի քաղաքային համայնքի ղեկավարին՝ ապահովել հողամասի նպատակային նշանակության փոփոխման պահին առկա կադաստրային արժեքների տարբերության գանձումը, եթե հողամասի նպատակային նշանակության փոփոխումից հետո դրա կադաստրային արժեքն ավելի բարձր է, քան մինչև փոփոխումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

10 նոյեմբերի 2021թ.

N 1208-Ն

ք. Ստեփանակերտ

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ կետը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 31-ի N 378 որոշմամբ հաստատված՝ Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի Դաշուշենի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում, համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող քաղաքացու սեփականություն հանդիսացող՝ գյուղատնտեսական նպատակային նշանակության 0,05 հեկտար վարելահողը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողերի:

2. Առաջարկել Դաշուշենի գյուղական համայնքի ղեկավարին՝ ապահովել հողամասի նպատակային նշանակության փոփոխման պահին առկա կադաստրային արժեքների տարբերության գանձումը, եթե հողամասի նպատակային նշանակության փոփոխումից հետո դրա կադաստրային արժեքն ավելի բարձր է, քան մինչև փոփոխումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

10 նոյեմբերի 2021թ.

N 1209-Ն

ք. Ստեփանակերտ

**ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ կետը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 27-ի N 351 որոշմամբ հաստատված՝ Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի Իվանյանի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում, համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող՝ գյուղատնտեսական նպատակային նշանակության 0,142 հեկտար արոտավայրը փոխադրել արդյունաբերության ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության՝ գյուղատնտեսական արտադրական հողերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

10 նոյեմբերի 2021թ.

N 1210-Ն

ք. Ստեփանակերտ

**ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ կետը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 1-ի N 589 որոշմամբ հաստատված՝ Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի Բերքաձորի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում, համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող քաղաքացու սեփականություն հանդիսացող՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության 0,0675 հեկտար արդյունաբերական օբյեկտների հողերը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության՝ բնակելի կառուցապատման հողերի:

2. Առաջարկել Բերքաձորի գյուղական համայնքի ղեկավարին՝ ապահովել հողամասի նպատակային նշանակության փոփոխման պահին առկա կադաստրային արժեքների տարբերության գանձումը, եթե հողամասի նպատակային նշանակության փոփոխումից հետո դրա կադաստրային արժեքն ավելի բարձր է, քան մինչև փոփոխումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

11 նոյեմբերի 2021թ.

N 1213-Ն

ք. Ստեփանակերտ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի N 626-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Արցախի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 1-ի «Արցախի Հանրապետության բնակչության կոմունալ ծառայությունների փոխհատուցման աջակցության միջոցառումը հաստատելու մասին» N 626-Ն որոշմամբ հաստատված հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը.

1) 3-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ նոր խմբագրությամբ.

«3.Աջակցությունը (փոխհատուցման ենթակա) տրամադրվում է սույն միջոցառման 4-րդ կետով նախատեսված ուղղություններով՝ համապատասխանաբար 2020 թվականի դեկտեմբեր ամսվա, 2021 թվականի բոլոր ամիսների և 2022 թվականի հունվար և փետրվար ամիսների համար:».

2) 4-րդ կետի՝

ա. 1-ին և 2-րդ ենթակետերի «և 2021 թվականի» բառերը փոխարինել «, 2021 թվականի բոլոր ամիսների և 2022 թվականի հունվար և փետրվար ամիսների» բառերով,

բ. 3-րդ ենթակետի «, մարտ և դեկտեմբեր» բառերը փոխարինել «և մարտ» բառերով,

գ. 3-րդ ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 3.1-ին ենթակետ.

«3.1) 2021 թվականի դեկտեմբեր ամսվա և 2022 թվականի հունվար և փետրվար ամիսների համար բնական գազի սպառման գծով՝ մինչև 180 խմ ներառյալ.»,

դ. 5-րդ ենթակետի «և դեկտեմբեր» բառերը փոխարինել «, դեկտեմբեր և 2022 թվականի հունվար և փետրվար» բառերով,

ե. 8-րդ ենթակետի «և 2021 թվականի» բառերը փոխարինել «, 2021 թվականի բոլոր ամիսների և 2022 թվականի հունվար և փետրվար ամիսների» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

12 նոյեմբերի 2021թ.

N 1229-Ն

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N1096-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը Արցախի Հանրապետության կառավարությունը **ն ր ո շ ու մ է**.

1. Արցախի Հանրապետության կառավարության 2021 թվականի հոկտեմբերի 12-ի «Արցախի Հանրապետության տարածքում բնակչության բնակեցման և տնտեսական գործունեության վարման ապահովմանն ուղղված վարակիչ հիվանդությունների տարածումը կանխելու և վերացնելու հատուկ պայմանները և ռեժիմը սահմանելու մասին» N 1096-Ն որոշման 1-ին կետի՝

1) 2-րդ ենթակետի «ա» պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ.

«ա. 2021 թվականի հոկտեմբերի 18-ից մինչև նոյեմբերի 22-ը՝ կատարվելով Արցախի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքում գործող նախադպրոցական ուսումնական հաստատությունների գործունեությունը.».

2) 2-րդ ենթակետի «ա» պարբերությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր «ա1» պարբերություն.

«ա1. 2021 թվականի նոյեմբերի 16-ից Արցախի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքում գործող ուսումնական հաստատությունների միջնակարգ կրթության 1-ին աստիճանի ուսուցումն անցկացնել առկա ուսուցմամբ և հերթափոխով՝ յուրաքանչյուր հերթափոխում առավելագույնը 15 աշակերտ, իսկ 2-րդ և 3-րդ աստիճանների ուսուցումն անցկացնել հեռավար.».

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

«5» նոյեմբերի 2021թ.

N 257-Ա

ք. Ստեփանակերտ

**«ԼԻԼՏԱՐՄ» ՄԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԴԵՂԱՏՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԱՅՐԻ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Լիցենզավորման մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասը և «ԼԻԼՏԱՐՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Լ.Ջիվանյանի հայտը

Հ Ր Ա Մ Ա Ց ՈՒ Մ ԵՄ՝

1. «ԼԻԼՏԱՐՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (2019 թվականի նոյեմբերի 21-ին տրված N Կ-XX-000349 լիցենզիա) դեղատնային գործունեության իրականացման վայրը՝ ԱՀ ք.Ստեփանակերտ, Մանուկյան 13/48 հասցեից փոխել ԱՀ ք. Ստեփանակերտ, Մանուկյան 8/64 հասցեի:

2. Արցախի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի իրավաբանական և լիցենզավորման բաժնին ապահովել՝

1) լիցենզիայի գործունեության իրականացման վայրի վերաբերյալ կատարված փոփոխության մասին տեղեկության գրանցումը համապատասխան գրանցամատյանում:

2) եռօրյա ժամկետում սույն հրամանի առաքումը նորմատիվ իրավական ակտերը հրապարակող մարմնին և հայտատուին:

Մ. ՀԱՅՐԻՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ
ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

2021 թվականի նոյեմբերի 8-ի

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 11-Ի N 5-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

N 252-Ն

ՀՐԱՄԱՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ՝

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների նախարարի 2016 թվականի հունվարի 11-ի «Հարկ վճարողների հավաստագրման կարգը սահմանելու մասին» N 5-Ն հրամանում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) հրամանի նախաբանից, հրամանով սահմանված հավելվածի 1-ին կետից, 2-րդ կետի 2-րդ ենթակետից, 8-րդ, 12-րդ կետերից, N 1 ձևից, N 2 ձևի աղյուսակից ու 7-րդ կետից և N 3 ձևից «օրենքի» բառերից առաջ հանել «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության» բառերը,

2) հրամանի 3-րդ կետից հանել «, հսկողական» բառը,

3) հրամանի 4-րդ, հրամանով սահմանված հավելվածի 11-րդ և 12-րդ կետերում «օպերատիվ» բառերից առաջ լրացնել «հետաքննության և» բառերը,

4) հրամանով սահմանված հավելվածում՝

ա. 9-րդ կետից և N 2 ձևի 6-րդ կետից «օրենքով» բառերից առաջ հանել «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության» բառերը,

բ. լրացնել հետևյալ բովանդակությամբ 10.1-10.4-րդ կետեր.

«10.1. Հավաստագրի գործողության ընթացքում գործունեությունը ժամանակավոր դադարեցնելու դեպքում հարկ վճարողը կարող է հաշվառման վայրի հարկային մարմին ներկայացնել դիմում՝ հավաստագրի գործողության կասեցման համար՝ վերադարձնելով հավաստագրի իր օրինակը:

10.2. Դիմումը ստանալուց մեկ աշխատանքային օրվա ընթացքում հաշվառման վայրի հարկային մարմինը տեղեկատվական բազայում կասեցնում է հավաստագրի գործողությունը՝ դիմումը ներկայացնելու ամսվան հաջորդող ամսվանից մինչև հավաստագրով ներառված ժամկետի ավարտը:

10.3. Սույն կարգի 10.1-ին կետում նշված հարկ վճարողները գործունեությունը վերսկսելիս առնվազն մեկ աշխատանքային օր առաջ դիմում են ներկայացնում հաշվառման վայրի հարկային մարմին՝ հավաստագրի գործողությունը կասեցումից հանելու նպատակով:

10.4. Դիմումը ստանալուց մեկ աշխատանքային օրվա ընթացքում հաշվառման վայրի հարկային մարմինը նախորդ հավաստագրում ներառված՝ արտոնությունից չօգտված ամիսների համար հարկ վճարողին տրամադրում է նոր հավաստագիր:»,

գ. 12-րդ կետում «Օպերատիվ» բառը փոխարինել «Հետաքննության և օպերատիվ» բառերով,

դ. 12-14-րդ կետերում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների նախարար» բառերի հոլովաձևերը փոխարինել «Արցախի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահ» բառերի համապատասխան հոլովաձևերով,

ե. N 1 ձևում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրության» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության օրենսդրության» բառերով,

զ. N 2 ձևի 4-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի» բառերը փոխարինել «Արցախի» բառով,

է. N 2 ձևի 7-րդ կետում ««Ժգ» բառից առաջ լրացնել ««գ.1»,» բառը,

ը. N 3 ձևում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների նախարարություն» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե» բառերով:

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ**

Դ. ՊՈՂՈՍՅԱՆ

2021 թվականի նոյեմբերի 8
ք. Ստեփանակերտ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ
ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ**

2021 թվականի նոյեմբերի 8-ի

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ
2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 27-Ի N 141-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

N 253-Ն

ՀՐԱՄԱՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարի 2018 թվականի ապրիլի 27-ի «Արգելանք դնելիս գույքի բացակայության, անբավարարության կամ հարկ վճարողի գտնվելու վայրն անհայտ լինելու մասին արձանագրության օրինակելի ձևը, դրամարկղում կանխիկ դրամական միջոցների գույքագրման, դրամարկղում կանխիկ դրամական միջոցների շարժի գույքագրման արձանագրությունների ձևերը, հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների կատարումն ապահովելու նպատակով հարկային մարմնի կողմից ընդունվող երաշխիքի ձևը և լրացման կարգը սահմանելու ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության պետի 2015 թվականի մարտի 10-ի N 1-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 141-Ն հրամանում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) հրամանով սահմանված NN 1-3 հավելվածներում «ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» բառերը փոխարինել «ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ» բառերով, իսկ «ֆինանսների նախարարի» բառերը՝ «պետական եկամուտների կոմիտեի նախագահի» բառերով,

2) հրամանով սահմանված N 4 հավելվածից հանել «ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» բառերը:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ**

Դ. ՊՈՂՈՍՅԱՆ

2021 թվականի նոյեմբերի 8
ք. Ստեփանակերտ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

ՀՐԱՄԱՆ

03 նոյեմբերի 2021թ.

ՆՀ-52-Ա

ք. Ստեփանակերտ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԱՐԴԱՏԱՐ-ՏԱՔՍԻ ԱՎՏՈՄՈՒԲԻԼՆԵՐՈՎ
ՆԵՐՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՈՒՂԵՎՈՐԱՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ԵՎ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ,
ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ
ՂԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 9-րդ, 37-րդ, 40-րդ հոդվածների պահանջներով և հիմք ընդունելով Արցախի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության մարդատար-տաքսի ավտոմոբիլներով միջպետական և ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության լիցենզավորող հանձնաժողովի 2021 թվականի հոկտեմբերի 29-ի N382-ՏՆ եզրակացությունը՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. Տրամադրել՝

1) **անհատ ձեռնարկատեր՝ Աշոտ Լևոնի Ալեքսանյանին** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության ՏՈՆ00781 լիցենզիա և լիցենզիայի N00001 ներդիր.

2) **ֆիզիկական անձ Արսեն Գրիգորիի Յախշիյանին** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության ՏՈՆ00782 լիցենզիա և լիցենզիայի N00001 ներդիր.

3) **ֆիզիկական անձ Մհեր Մաքսիմի Հայրապետյանին** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության ՏՈՆ00601 լիցենզիայի N00003 ներդիր.

4) **ֆիզիկական անձ Մերյոժա Արամի Սարգսյանին** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության ՏՈՆ00484 լիցենզիայի N00003 ներդիր:

2.Դադարեցնել՝

1) **ֆիզիկական անձ Մհեր Մաքսիմի Հայրապետյանի** Արցախի Հանրապետությունում մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության ՏՈՆ00601 լիցենզիայի N00002 ներդիրի գործողությունը.

2) **ֆիզիկական անձ Մերյոժա Արամի Սարգսյանի** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության ՏՈՆ00484 լիցենզիայի N00002 ներդիրի գործողությունը:

3. Եռօրյա ժամկետում ապահովել սույն հրամանի առաքումը պաշտոնական տեղեկագիրը հրապարակող մարմնին:

Հայկ Խանումյան

